# ԲԵՆԶԻՆԻ ԳՆՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՇՀԲՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-14-3

« » օգոստոս 2014թ.

ք.Երևան

«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը,ի դեմս տնօրեն Ս. Ղալթախչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝Գնորդ), մի կողմից, և « » ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1.Պայմանագրի առարկան,գինը և գործողության ժամկետը**

1.1 Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրով սահմանված կարգով,նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում՝Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ***բենզին*** (այսուհետև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար: դրամ:

1.2 Պայմանագրի գինը ըստ ընդունված գնային առաջարկի կազմում է

1.3 Ապրանքի մատակարարումը սկսվում է **օգոստոսից**:

1.4 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

**2.Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

**3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք,ապա

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց,իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանգրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահաջել Վաճառողից սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև